ցայց տալը։ Աղջիկները միայն ազատ են փաթաթներից և մինչև ամուսնութիւնը բացերես են ման գալիս։

Կոշիկ: Ընդհանրապէս ամառ ժամանակ թէ կին, թէ աղջիկ ոտաբոբիկ են շրջում, իսկ ձմեռը հագնում են սև և կարմիր ոտնամաններ, որի ծայրերը սրածայր են և կեռ։ Դա տեղական բարբառով «մաշիկ» է կոչւում, որ գնում են գիւղում աշխատող մաշկակարներից։ Թէ կնոջ, թէ հարսի և թէ աղջկայ կոշիկները նոյնն են։

Հարսները գլուխներին կապում են «թախտաձ», վզից կախում «աշմ»։ Աղջիկները հագնում են կանանց պէս, միայն այն զանազանութեամբ, որ նրանք փաթաթանք չունեն գլխներին, այլ դնում են ասեղնագործած գլխարկներ, որոնց տակից ընկնում, ծածանում են ծամերը։ Գլուխները ատրում են, մէջտեղը մի գիծ (արտակ) թողնում և ծամերը ձգում ցած, որի ծայրերին կապում են մի քանի գունաւոր ուլունքներ։ Փոքր աղջիկները վզից կախում են զանազան ուլունքներ։

Բաղանիս: Փերիայի հայաբնակ ոչ մի գիւղում չկայ բաղանիս, բացի Նամակերտից, այն էլ ամեն օր բաց չէ, այլ ամիսը կամ շաբաթը մի անգամ։ Ընդհանրապէս թէ տղամարդիկ և թէ կանայք լողանում են տանը (գոմում), երբ կամենում են, իսկ փոքր ինչ հարուստները 3—4 ամիսը մի անգամ կամ աւելի ուշ գնում են բաղանիս։

ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄՆԵՐ ԵՒ ՍՆՈՏԻԱՊԱՇՏՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Բուի ձայնը չարագուշակ նշան են համարում. եթէ բուն բռում է մի տան վրայ, հաւատում են, որ տան անդամներից մինը կմեռնի։
Գիշերը գլխաբաց դուրս չեն գալիս, որպէսզի սատանաները չիմանեն։
Գիշերը պարսկի կերեզմանի մօտ չեն գնում, որովհետև մեռելների ուրուականները նրանց կհալածեն իբրև «անհաւատների»։
Գիշերը վախենում են ջրհորի մօտ գնալ, որովհետև միջի գները դուրս կգան և կբռնեն։
Գիւղացին տնից դուրս գալիս՝ եթէ ձայն տաս նտնից, յետ է դառնում և այլևս չի գնում, դուշակելով՝ որ այդ օրուայ գործը չպիտի